

ՀՐԷԱՆԵՐԸ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԼՈՒԾԻ ՏԱԿ

Գրեց՝ Մ. ՏԵՐՊԷՏԻՐԵԱՆ

II

ՍԱՊԱԹԱՅ ՍԷՎԻ

ՔԱՆԻ քանի անգամներ ալիւսալ տեղեր եւ ալիւսալ դարերու մէջ յայտնուած են հրէաներ, որ ինքզինքնին յայտարարած են իրր խակական մեհաններ: Պատմութիւնը լեցուն է սոյգալիսի յայտնութիւններով: Մինչեւ իսկ Կիւրոս Մեհիւս հռչակուեցաւ մարգարէներէն, որովհետեւ արտօնեց անոնց Բաբելոնէն երուսաղէմ վերադառնալ ու տաճարը վերականգնել:

Նոր դարերու ամենանշանաւոր Մեհիւս եղած է Սէվի անունով Իզմիրցի հրէայ մը, Սպինոզա փիլիսոփային ժամանակակից:

Սապաթայի ծնողքը Սպանիոյ հալածանքներու սլաճառաւ թուրքիա ապաստանելով Իզմիրի մէջ բնակութիւն հաստատած էին: Ապագայ Մեհիւս զեղաղէմ, սեւ մօրուքով եւ ընտանաբղ մըն էր, որու քաղցրահնչիւն ձայնն անմիջապէս կը գրաւէր ունկնդիրները: Շատ կանուխէն ան հրաժարած էր իր տարիքին վայել խաղերէն ու հաճոյքներէն եւ ինքզինք տըռւած էր միակեցութեան: Քսանըհինգ տարեկան հասակէն արդէն Քապալի արժանի նկատուած էր եւ վունտած իրեն իր կին առաջարկուած երկու զեղանի հրէուհիները:

Այս տարօրինակ ժուժկալութիւնը մեծ յուզում յառաջ բերաւ Իզմիրի հրէայ գաղութին մէջ, եւ հետզհետէ բազմաթիւ աշակերտներ հաւաքուեցան իր շուրջը:

Այդ ժամանակները պատերազմ ծագեցաւ Պոլսոյ եւ Վենետիկի միջեւ եւ Սապաթայի հայրը ահագին դրամ չահեցաւ երկու կողմերուն ալ ապրանք հայթայթելով եւ իր այդ յաջողութիւնը վերագրեց իր զաւակին բարեպաշտութեանը: Ինքն ալ սկսաւ յարգել իր զաւակն իրր սուրբ մը, մանաւանդ որ 1666 թուականը կը յարմարէր Քապալի մէկ քանի տուեալներուն իրր Մեհիւսի գալստեան թուական:

Առաջին անգամ 1648-ին Սապաթայ յայտարարեց իր աշակերտներուն, թէ իր մէջ կը զգայ աստուածային զօրութիւն մը եւ համարձակեցաւ արտասանելու երբայեքէն Եհովա բառի չորս տառերը: Մեծ սրբապաշտութիւն մըն էր այս սեւէ մահկանացուի համար: Ահագին տղմուէ բարձրացաւ Իզմիրի մէջ, եւ րարբիներու ժողովը քաղաքէն արտաքսեց Սապաթայն ու անոր հետեւողները:

Պատմութիւնն իրաւունք չի տար մեզ Սապաթայը խաբերայ կամ խնեթ կոչելու, րայց անտարակուսելի է թէ Քապալի եւ Թալմուտի մշտական բնթերցումները մեծապէս խախտած ըլլալու էին իր մտքի հաւասարակընութիւնը:

Ան բնաւ չյուզուեցաւ րարբիներու որոշումէն, որովհետեւ կը խորհէր թէ Մեհիւսն ալ մինչեւ իր յայտնութեան օրը պէտք է որ չաբաբուրի ամբողջ տղին պէս: Թերեւս կարգացած էր նաեւ Աւետարանը եւ աչքի առջեւ ունէր Յիսուսը:

Սապաթայ Սէվի հեռացաւ Իզմիրէն եւ ճամբորդեց շատ մը երկիրներ: Գնաց Պոլիս եւ անկէ ալ Սելանիկ: Այնտեղ ան յանգչութիւնն աւելի առաջ տարաւ եւ յայտարարեց, թէ ինք ամուսնացած է Թօբային հետ... Բարբիները աւելի եւս զրգոտեցան, եւ ան ստիպուեցաւ փախչիլ քաղաքէն եւ ապաստանիլ Յունաստան եւ անկէ ալ Եգիպտոս:

Գահիրէի մէջ ան ծանօթացաւ Յովսէփ Չելեպի անունով հրէայ հարկահաւաքի մը հետ, որ միութիքական բնութեամբ եւ մոլեռանդ մէկն էր եւ ահագին հարստութեան տէր: Ան սիրով հիւրընկալեց Սապաթայն եւ անոր տրամադրութեան տակ գրաւ իր ամբողջ հարստութիւնը:

Չելեպիի ապարանքին մէջ Սապաթայ իրապէս ամուսնացաւ Սարա անունով նշանաւոր հրէուհիի մը հետ: Այս կինը մանուկ հասակին մէջ հրաշքով աղատած էր կոտորածներէ եւ հիւրընկալուած ու զատախարակուած քրիս-